նէի աչքին հեռի եղող գեղացիներու խումբ մի։ Ո՞վ կարող է, մեծ մայրաքաղաքի մը արուարձանաց մէջ անկախ բազմութեան մեղաց առաջն առնուլ, առանց այնպիսի կրօնի մը, որ կենաց ամեն վիճակին համար պարտաւորութիւն և առաքինութիւն քարոզէ։ Վերցուցէք Աստուածաբանի վարդապետութիւնն, և ահա ամեն գիւղի մէջ ատիկանութիւն, բանտ եւ դահիճ պէտք պիտի ըլլայ։ Փոխադարձաբար, եթէ կառաջնորդութեան բաղնիներն կանգնէին արդի ժողովրդոց քով, եթէ ընկերականութեան այսպիսի վիճակին մէջ, յորում գերութիւնն ջնջուած է, Ղազ Հերմէսը եւ Պոնիկ Աղելիը պաշտուէին, անշուշտ մարդկային ցեղն վերջացած պիտի լինէր։

Աւ ահա հոս է նոցա մեծ վրիպանքն, որք կը դովեն բազմաստուածութիւնը, բարոյական զօրութիւնն կը բնականէն որոշելուն համար. և որք մի և նոյն ժամանակ կը պարտաւորեն քրիստոնէութիւնը հակառակ դրութիւն մը հետեւելուն համար։ Այնքա՞ն չեն տեսներ բնաւ որ բազմաստուածութիւնն կը վերաբերէր գերեաց բազմաթիւ խմբի մը, հեռաւորաբար ստիպուած էր երկնչիլ մարդկային ազգը լուսաւորելէ. նա պարտաւորուած էր ամենայն ինչ մնաց տալ և ոչ ինչ չառնել հոգւոյ դաստիարակութեան համար։ Իսկ ընդհակառակն քրիստոնէութիւնը, որ կ'ուզէր գերութիւնն ջնջել, պարտաւորեցաւ յայտնել մարդկան իրենց արժանաւորութիւնն եւ ուսուցանել նոցա արդարութեան և առաքինութեան վարդապետութիւնն։ Պէտք է ասել, որ աւետարանական կրօնն ազատ ժողովրդի կրօն է, ուրախնաւեւ սա կը միայնէ բարոյականը կրօնականին հետ։

Վերջապէս ժամանակ է որ մենք զարհուրինք այն վիճակին վերայ ուր ապրած ենք քանի մը տարիէ ի վեր։ Թող մոռանան այն ցեղին վրայ որ յերեւան կը գայ մեր քաղաքաց և գիւղերու մէջ. այն մանուկներու վրայ, որք յեղափոխութեան ժամանակ ծընած լինելով, բնաւ չեն լսած ոչ Աստուծոյ վրայ խօսուիլը, ոչ իրենց անմահութեան վրայ և ոչ պատժոյ ու վարձատրութեանց վրայ, որք պատրաստուած են իրենց համար միւս կեանաց մէջ։ Թող մոռանան այն խեղճերու վրայ, որք հնոյն նման ազգ մը պիտի կազմեն, եթէ վերայ պէտք եղած դարմանն ընելու փոյթ չը տարուի։ Արդէն ցաւալի ախտանշաններն սկսած են կազմուիլ, եւ անմեղութեան հասակն շաղախուած է բազմատեսակ մեղքերով։ Թող փիլիսոփայութիւնը, որ յետ այսր ամենայնի, չէ կարող միջամուխ լինել աղքատաց քով, բաւականանայ մեծատանց սրահներուն մէջ բնակելով, և գէթ հիւղերը կրօնին թողու, և մանաւանդ թէ, աւելի ուղիղ և իւր անուան արժանի, Թող նա լինքն թող տայ որ կործանին այն պատուարներն, զորս Ջանաց ցարդ բարձրացնել մարդոյ և նորա Արարչին մէջ։

(Շարունակի։)

ԱՌՈՂՋԱԿԱՆ

(Շարունակութիւն։ տես թիւ 2։)

Ահա այսպիսի փառքի մը տեսնուած է մարդկային ազգը, ուր հասնելու համար հարկաւ ճանապարհ միկայն, և ահա այն ճանապարհը, այն ճշմարտութիւնը և այն անսխալ երջանկութիւն փառաւորուած կեանքը նոյն ինքն Յիսուս Քրիստոս և քրիս-

digitised by A.R.A.R.@

ատելութիւնն է. անով միմիայն կարող ենք հասնիլ մեզ համար սահմանուած երանական վախճանին։

Մարդկան ազգի մէկ հատիկ փրկիչ ու բարերար Յիսուս Քրիստոս իւր կեանքն ու խօսքերը տուաւ օրինակ և առաջնորդ դէպ ի բրեն դիմելու, ի բրեն հասնելու և զինքը վայելելու։

Արդ ցանկութեան և հեշտախոտութեան գործքերը աւելի են Յիսուս Քրիստոսի, նորա վարուց և կենսատու խօսքերուն հակառակ են ամեն շարութիւնք։

Նա հեշտախոտութեան գործքէն յառաջ խորհուրդն արգիլած է. քանզի կըսէ, «Յանկանալու մօտ կնոջ երեսը նայողը շնութիւն կընէ»։ ուրիշ տեղ մի եւս. «Սրտէն ելած խորհուրդներն են, որ զմարդ կը պղծեն»։ Լ՚ի յիրաւի, փուշը փոխանակ երեսէն քաղելով արմատը զօրացնելու, պէտք է արմատէն խլել. անպարկեշտ խորհուրդները կարող են ամեն ակնածութիւն և պարսաք մառայնել, և օր մի շարութիւնը պտղաբերել. ուրեմն խորհրդոց մէջէն խլելու է շարութեան արմատը։ Վասն զի «Ներսէն, մարդուն սրտէն չար խորհուրդներ կելնեն, շնորհիւ, պոռնկութիւն, գիճութիւն, սպանութիւն, գողութիւն, ագահութիւն, չորութիւն, նենգութիւն, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն. այս բոլոր չար բաները ներսէն մարդուն սրտէն կելնեն և ասոնք են մարդը պղծողները», (Մարկ.) Տեառն մերոյ այս խօսքերուն հետ եմէ Պօղոսի Ա. Կորընթացւոց Զ. գլուխն ալ ուշադրութեամբ և հեղութեամբ կարդաք կը տեսնէք, որ վարաշտ ցանկասէրներու առջեւ արքայութեան ճանապարհը գոց է, քանզի առաքեալն եւս ցոյց կը տայ, որ այնպիսիներն Աստուծոյ արքայութիւնը չը պիտի ժառանգեն քանզի անաստուած հեթանոսաց անասնական հաճոյքէն յառաջ եկած պղծութիւններն են։

Ուրեմն ցանկութիւնքն եւս զմեզ այս կենցաղոյս մէջ թշուառացնելէն յետոյ Աստուծոյ արքայութենէն, նորա ամենաքաղցր տեսութենէն ալ պիտի զրկէ եւ մեր յաւիտենական կենաց երջանկութիւնը մեր ձեռքէն յափշտակելով մշտնջենաւոր թշուառութեան պիտի մատնէ։ Ո՜հ, և ինչ յիմարութիւն. բերկրանք և երջանկութիւն վայելելու տենչանօք բանի մը հետեւիլ, և նոյն բանով չարաչար տանջուիլ, կրկին կեանքով ալ թշուառանալ. որչափ հակառակ է մարդկային դատողութեան և վեհութեան։ Մինչ գեռ եմէ հոգեւոր բարեաց, ճշմարիտ եղբայրսիրութեան, առաքինութեան և որբութեան հետեւիք, կրկին կենաց մէջ ալ երանելի պիտի լինիք. անոտի և անցաւոր հաճոյք մի ըստ հելով, ճշմարիտ, հաստատուն եւ անվախճան բարիքն ու բերկրանքը պիտի ստանաք հանդերձեալ կենաց մէջ, ուր անսերկիւղ և անկասկած պիտի վայելէք այն ամեն քաղցրութիւնն ու մեծութիւնը զոր ձեզ համար պատրաստած է ձեր երկնաւոր Հայրը։

Որչափ ամօթալի է քրիստոնէից համար որ երջանկութիւնը կիրբերու եւ ցանկութեանց մէջ կ՚որոնեն։ Եւ կամեցեմ, որդեակք իմ, երբ փիլիսոփայի մի տա խօսքերը կը յիշեմ. «Երջանիկ է, կըսէ, այն մարդուն կեանքը, որուն սիրտը կիրբերէ ազատ, սնունկձելի, անդրդուելի և հաստատ է. երկիւղէ և ցանկութենէ ազատ է. ի բրեն համար մէկ հատիկ բարի՝ համեստութիւնը կը տեսնէ, և մէկ հատիկ չար՝ վատթարութիւնը»։

Մտածեցէք, որդեակք իմ, դուք

digitised by A.R.A.R.@

քրիստոնեայ զաւակներ, դուք Աստուծոյ որդիներ և Յիսուսի Քրիստոսի ժառանգակից ըլլալու կանչուած էք. դուք քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ, Աստուծոյ սեփհական ժողովուրդ անուանուած էք և այսօր երջանկութիւնը անհամեմատութեան եւ վսեմութեան մէջ կը բնակէք. դո՛ւք որ Քրիստոսի սիրոյն չարչարանաց և մահուան արդեանքը փրկուած և 'ի սրբութիւն կանչուած էք ու ոչ թէ 'ի պղծութիւն. դո՛ւք ժողովուրդ մի կը կազմէք ուրկէ կը յառաջանան ուսուցիչք, դատախազք, քահանայք, վարդապետք, եպիսկոպոսունք, պատրիարքունք և կաթողիկոսունք, որք առաջնորդ պիտի ըլլան կուրաց և լոյս՝ խաւարելոց. արդ եթէ այժմէն այդպիսի կիրքերով տոգորիք և ունեւորանաք, ալ ո՞ր վիճակնուդ մէջ պիտի կարողանաք անոնցմէ ազատիլ եւ ձեր կոչման արժանանալ: Դուք ազգ մի էք, որ զԱստուած ձեր Հայր կ'անուանէք և նորա կամքը չէք կատարեր, իսկ նորա կամքն է սրբութիւն. քանզի Աստուած կ'ասէ. «Ես սուրբ եմ, պէտք է որ դուք ալ սուրբ ըլլաք». Նոյնպէս առաքեալն ևս կ'ըսէ. թէ «Աստուծոյ կամքը ձեր սուրբ ըլլալն է»:

Ուրեմն ամօթ չէ՞ ձեզ որ հեթանոսաց գործքերով ապականուիք. ինչ տարբերութիւն պիտի ըլլի ճշմարտութեան և ստութեան մէջ, երբ երկուքին հետեւողք ալ մի և նոյն ճանապարհը կ'ընթանան. ինչ է Աստուծոյ ժողովրդեան և կռոց պաշտօնէից տարբերութիւնը, միթէ միայն անունն է. — ո՛չ. քանզի լոկ անունը ոչինչ օգուտ չունի, եթէ անուան արժանի գործ չըլլի: Պէտք է առնէք դուք այն գործերը՝ զորս հեթանոսք կը կատարեն, որոնցմէ Աստուած զզուելով սրբութեն օրէնքներ սահմանեց. պէտք է դուք ևս զզուիք անոնցմէ և ճշմարիտ Աստուծոյ սահմանած սրբութեան օրէնքին հետեւիք. քանի որ ճշմարտին Աստուծոյ կը պատկանիք, նորա մեծվայելչութեան հակառակ է այդ ամէն խորհուրդներն ու գործքերը:

Հա՛յ որդիներ, Քրիստոնեա՛յ զաւակներ, չէ՞ք ցանկար այնպիսի մանկանց նախանձելի վիճակին, որոց համար մեր Փրկիչն ասած է. «Թող տուէք այդ մանուկները, որ ինձ գան, ինչու որ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը... թէ որ չը դառնաք և այս մանուկներուն պէս չըլլաք, չէք կարող Աստուծոյ արքայութիւնը ժառանգել»:

Մանուկ ասելով չէ թէ հասակը՝ այլ անմեղ մանկան սրտի սրբութիւնը, հեզութիւնը, խոնարհութիւնը և հնազանդութիւնը կը հասկցունէ և ասոր նմանիլ կը յորդորէ ամէն հասակի մարդիկ. յայտնի է ուրեմն թէ հասակով տարեկան մանուկ ալ կարող է գտնուիլ որ չարութենէ ազատ և սիրտն ու միտքը սուրբ ըլլի: Ահա այսպիսիներն ու նոցա բովանդակութիւնն է Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին, սուրբ ազգը, սեպհական ժողովուրդը, քահանայութիւնը, թագաւորութիւնը. այսպիսին է Աստուծոյ որդին, որ կարող է համարձակութեամբ կոչել «Հա՛յր մեր, սուրբ եղիցի անուն քո». անանկներն են որ Յիսուս Քրիստոսի քաղցր երանութեանը կ'արժանանան. «Երանի սրտով սուրբ եղողներուն ինչու որ նոքա զԱստուած պիտի տեսնեն»:

Դուք չէ՞ք ցանկար Աստուծոյ որդի և ճշմարիտ եկեղեցւոյ անդամ ըլլալ. չէ՞ք ցանկար այն մեծ երանութիւնը վայելել: Պէտք է որ ցանկայք ե-

digitised by A.R.A.R.@

թէ խմաստուն լինել կուզէք. քանզի յիմար է այն մարդը, որ չը կամի չը բաղձայ այս աշխարհս մէջ մաքր եւ մարմնով առողջ լինել. անզգայ է այն՝ որ չուզէ զինքն ստեղծող և իրեն այսքան բարութիւն շնորհող ամենաբարի Աստուածը տեսնել. չարերն եւ մեղաւորներն են, որ նորա տեսութենէն կը սարսափին ու կը փախչին և ահա այն ատեն կը մատնուին ամեն տեսակ չարեաց ու ապականութեանց։

Քաղցր է ինձ հաւատալ որ դուք կը փափաքիք ձեր կոչումը յարգել. ուրեմն զգուշութեամբ տեսէք թէ ինչպէս պէտք է վարուիք, որ արժանի լինիք ձեր այդ սուրբ, փառաւոր եւ երջանկաւէտ կոչման հասնելու։ Զգըլայ որ աշխարհի որ և իցէ մէկ ցանկութեամբ զբաղելով մերժէք Աստուծոյ խրախճանը, ուր ամենաքաղցր սիրով կը հրաւիրէ զձեզ՝ ձեր երկնաւոր Հայրը. չըլլայ որ մէկէրնիդ, "կին ածի, միւսնիդ, թէ ագարակ դնեցի, այլք, թէ հինգ զոյգ եղն գնեցի, չեմ կարող գալ" պատասխանելով եւ մնաք. այսինքն ձեր մարմնոյ սնոտի հաճոյքը կատարելով զրկուիք այն անպատում բերկրանքէն զոր ժառանգելու կոչուած էք. մի՛ և մի գուցէ առանց առաքինութեան և արքութեան հանդերձի մտնէք այն քրիստոնէական կրօնի սահմանած քաղցր ու զմայլելի խրախճանը, ուրիկ դուրս արտաքսուիլը խիստ ամօթալի և առաւել սարսափելի տանջանք է։ Քանզի տեսնել այն վսեմութիւնը՝ նշմարել այն ակնապարար գեղեցկութիւնն ու պայծառութիւնը և զրկուիլ անկէ և չը կրնալ վայելել զայն արդարեւ մեծ է քան զամենայն չարիս և ամենայն տանջանքէ անտանելի է. զէոյշ կայէք ուրեմն որդեակք իմ, որ այսպիսի սոսկալի դժբաղդութեանց չը հանդիպիք. այլ ձեր ժառանգութիւնն ստանալու արժանաւորք։

Լ.

Ամեն մեղք ու մեղութիւն յիմար ու ապականուած սրտերու քաղցր կելեւէն, բայց նոքա իրօք գառն են եւ մահատու, մանաւանդ յանկութիւնը կամ վատաշ զգլուխ արծութիւնը։ Ճանճը ամենայն ուրախութեամբ կը դիմէ մեղրին վ՛երայ զայն մեծ ախորժանօք վայելելու համար, բայց յանկարծ նոյն իսկ մեղրէն կը բռնուի և ահա այն քաղցրութիւնը, որ իրեն հեշտութիւն պիտի լինէր, մահու որոգայթ եղաւ. նոյնպէս Թիթեռը լոյսը վայելել կամելով վնասուելը կայրէ և ինքը կը կորսուի. այսպէս ալ հեշտասէր մարդն կարծելով որ պիտի երջանկանայ իւր հաճոյից վայելումովը, յիմարաբար մարմինը կը փտեցնէ և՝ ի մահ կը դիմէ։ Բայց ինչպէս անմիտ ճանճն ու Թիթեռը կ՛ըսեն, "Թող մեր հաճոյքը վայելենք և Թող մեք մեռնինք", նոյնպէս ալ Թերեւս վատաշատ հեշտասէրը կըսէ, Թող ես իմ տափանքներս վայելեմ և Թող մարմինս փտի"։ Բայց ա՜նմիտ, չը խորհիս որ եթէ մարմինդ փտի, ալ ինչպէս պիտի առնուս հեշտութեանդ ճաշակը. այն ատեն ամեն բան դառն ու անախորժ պիտի գայ, յոժարութեամբ պիտի զոհես ամեն բան, միայն թէ նախկին առողջութիւնդ ձեռք ձգես. բայց շատ անգամ անկարելի պիտի լինի։

Հեշտասիրին գործը նաև անոր հաւմար շար ու տանելի Աստուծոյ և մարդկան, որովհետեւ իւր վայրենական զուարճութեան համար անձնասպանութիւն, որդեսպանութիւն և մարդասպանութիւն միանգամայն կը կա-

digitised by A.R.A.R.@

տարէ. քանզի ինչպէս յառաջուց բսինք իւր ծուծը քամելով իւր կեանքը կը մաշէ, և այն հիւթը զոր ունայն տեղը կը կորուսանէ, եթէ պահէր և մանաւանդ ինկին բատ արբութեան օրինաց և բատ իւրում պայմանի գործադրէր, իւր նմանը իւր սիրոյ պտուղը և մարմնոյն մասերը պիտի ծնանէր, իրեն միխիթարութիւն պիտի ունենար իւր զաւակները և աշխարհի առողջ ու խելացի մարդիկ պիտի ընծայէր. բայց հիմա ոչինչ։

Կ'ուզեմ իւր անձէն կը զանէ, որպէս զի իւր նմանը ծնի. և այն հեշտութիւնը, որ այդ գործողութեան մէջ տպաւորուած է, միմիայն մարդ ծնանելու և մարդկան ազգը յարատև պահելու համար է, և ոչ թէ մարդկան ազգը իրենց սիրոյն իրենց առաջին տարիին մէջ ապրկանելու համար է։ Հին բանաստեղծներին մէկը բնական լուսով կրթուելով զգացած էր հեշտախտութեան կամ գիճութեան ինչ մեծութիւն լինելը, ուստի երբ մարդ մի տեսաւ, որ հեշտախտութեամբ և գիճութեամբ այս ազնիւ հիւթը կորսնցնելու չարութեան մէջ ինկած է, ըսաւ, "Ո՛վ դու, մատերովդ կորուսածդ մարդ է"։

Ահա այսչափ վնասակար և այսքան մեծ չարութիւն է հեշտախտութեան մոլութիւնը, որ մարդ կը սարսափեցնէ. մանաւանդ իւր հնարած անբնական և տեղ ոճիրներովը, որ երկինք ու երկիր վրէժխնդրութեան կը դրդռէ և ճշմարիտ քրիստոնեայն սոսկումով կը պակուցանէ։ Ուրեմն որդեակք իմ, կ'աղաչեմ զձեզ Յիսուս Քրիստոսի սիրով և հայրական քաջալերութիւն կը խրատեմ ու կը յորդորեմ որ փոխիք այդ մոլութենէն. այսօր, այս կեանքն, այս վայրկենին երբ կենանաք նորա դէշութիւնը, անմիջապէս թողուք հեռանաք՝ մանաւանդ զազանեմի փոխելու պէս։

Անշուշտ ով որ բարեսէր է, պիտի սոսկայ այսու հեռու հեշտախտութեան մոլութենէն, ով որ Աստուծոյ որդի և ճշմարիտ Քրիստոնեայ լինել կուզէ, պիտի փախչի այս չար մոլութենէն, և ով որ այս ախտին գերութենէն ազատիլ կ'ուզէ, ով որ չար ընկերաց թելադրութեամբ նորա մէջ ինկած է և փրկուիլ կ'ուզէ, անշուշտ գործման պիտի բնտռէ, ես ալ թէպէտ իմ խօսքս ընթացքին մէջ շատ տեղ ցոյց տուած եմ գործմանն թէ փոխելն ու հեռանալն է, բայց այսպիսեաց սիրոյն համար յանձն կ'առնում զատ հատուածներով ցոյց տալ թէ ինչպէս կարելի է փախչիլ և հեռանալ մոլութիւններէ։

Այն հնարքներն ու միջոցները, որովք դուք թէ ձեր կիրքերէն յառաջացած վնասները պիտի կարողանաք գործմանել և թէ ձեր կրից յաղթել, հետեւեալներն են. 1. Երկիւղ Աստուծոյ, աղօթք եւ պահք. 2. Կրից հետեւանքը, մահը և վերջին դատաստանը միշտ յիշել. 3. Կիրքերը դրդռող առիթներէ, տեսիլներէ եւ խօսքերէ զգուշանալ, փախչիլ և հեռանալ, և խորհուրդը զսպել. 4. Վատ ընկերակցութիւններէ, առանձնութիւններէ, իրարու հետ անհամեստ համարձակութիւններէ 'ի սպառ զգուշանալ, պարկեշտութեամբ և պատուով վարուիլ. 5. Շարունակ անձը օգտակար աշխատանաց տալ, միշտ զբաղիլ և դատարկութենէ սոսկալ։

(Շարունակելի)։

digitised by A.R.A.R.@